ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1132-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-002-0102-0060 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00123 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ՄԱՌԱՆ/ ԱՐԹՈՒՐ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ.N912-Ն որոշման 35-րդ կետի «դ» ենթակետի պահանջներով, ՀՀ«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 37-րդ հոդվածը և հիմք ընդունելով Ճամբարակի ավագանու 12.09.2024թ.թիվ 92-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող Գ. Նժդեհի փող,103/3 հասցեում գտնվող/վկայական 23042024-05-0048/,05-002-0102-0060 կադաստրային ծածկագրով 0.00123 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը և նույն հողամասի վրա գտնվող օրինականացված 12.3քմ արտաքին մակերեսով մառանը վաճառել քաղաքացի Արթուր Դալլաքյանին:
2. Քաղաքացի Արթուր Դալլաքյանը Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե՝900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել է 5000/հինգ հազար/ՀՀ դրամ/անդորագիրը կցված է գործերին/,իսկ շինության համար վարչական բյուջե՝ 900185061232 հաշվեհամարին պետք էր վճարել 18300/տասնութ հազար երեք հարյուր/ՀՀ դրամ,որից վճարել է 10000 /տասը հազար/անդորագիրը կցված է գործերին/:
3. Անվավեր ճանաչել համայնքապետարանի կողմից 27.06.2024թ.տրված 634-Ա որոշումը:
4. Որոշման ընդունման օրվանից 30 օրվա ընթացքում սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 __ թ. _____ ____
ք.Ճամբարակ